

CHRISTMAS EXPO 2003
ՇՆՈՒՆԻ ԵՒ ՏՕՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆՈՒՄ
 21 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր, ամեն օր՝
 կ. Ե. Ժամը 4:00-ին երեկոյան Ժամը 10:00
ՄԱՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ
ԲԱԶՄԱԹԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ
 Ռուսական քրիստոսի ցուցարարին
 և Beauty Home Galleryին
Expo Beirut Ain-El-Mreisseh
 Tel.: 01 - 361040

ԱԶՏԱԿ


ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE
 أزتاك جريدة يومية سياسية وأدبية - اليوم الثامنة والعشرون
 1500 Լ.Ո. 769-ՏԱՐԻ, ԹԻԻ 235 (21577) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՉ

ԹՈՒՐԲԻՎ ԵՒ ՍՈՒՐԻՎ ՓՈԽՎԱՐԱՐՉ
ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ՄԸ ԱՏՈՐԱԳԵՑԻՆ
 ԱՆԳԱՐԱ, 17 (ԱՅՓ).- Թուրքիա եւ Սուրիա փոխադարձ հասկացողութեան համաձայնագիր մը ստորագրեցին՝ թափ տալու համար ոճիրներու եւ ահաբեկչութեան դէմ պայքարի մէջ գործակցութեան, հաղորդեց «Անտոյն» լրատու գործակալութիւնը:
 Ներքին գործոց նախարար Ապտիլթաւտէր Աքշու մամլոյ ատոյիսի մը ընթացքին ըսաւ, որ երկու երկիրները հաստատած են, թէ ահաբեկչութեան դէմ պայքարը շատ կարեւոր է շրջանային խաղաղութեան համար:

ՊԱԱՊՏԱՅԻ ՄԷՋ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՆԵՐԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՇԱՏ ՄԸ ՀԱՐՅԵՐ



Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիին, որուն հետ քննարկեց ներլիքանանեան հարցեր՝ վերջին պարագումներուն լոյսին տակ: Արծարծուեցան նախորդող օրերուն խորհրդարանին մէջ տեղի ունեցած քննարկումները, տրուած որոշումները, յատկապէս լիբանանեան երկրագործութեան եւ նախարարներու թղթածարներուն վերաբերող: Նախագահ Լահուտ եւ Պրորի արծարծեցին նաեւ Լիբանանեան Համալսարանի դասախօսներուն հարցը, քննարկեցին անոնց դասադուլը ու ներկայացուցած պահանջները, որոնք պիտի քննարկուին նախարարաց խորհուրդի յաջորդ նիստին: Նախագահ Լահուտ յոյս յայտնեց, որ հարցին բարուք լուծում մը կը գտնուի եւ Լիբանանեան Համալսարանին մէջ դասերը կը վերսկսին:

Ան նաեւ նախարարաձայն ժընեի իր այցելութեան, նախագահներուն եւ քաղաքական գործիչներուն հետ ունեցած հանդիպումներուն եւ անոնց արդիւնքներուն:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՅԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԱՊԻ ՀԵՏ

Երէկ առաւօտ, Հ. Յ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը այլեցեց ընկերային հարցերու նախարար Ասատ Տիապի:

Հանդիպումը ընդգրկեց շրջանային, տեղական խնդիրներ, ինչպէս նաեւ լիբանանցիներուն դիմագրաւած ընկերային հարցերը:

ՍԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԾՈՂՈՎԻՆ

Երէկ, կէսօրէ ետք, Թատամոն Կուսակցութեան կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ լիբանանեան կուսակցութիւններու ներկայացուցիչներու խորհրդածողով մը, որուն օրակարգէն էր պաղեստինցիներու բնակեցման մեթոտուն ու անոնց տունդարձի իրաւունքը:

Խորհրդածողովին մասնակցեցաւ Հ. Յ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Միսիբարեան:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԳԵՍՊԱՆԻՆ

Հ. Յ. Լիբանանի Հայ Դատի Մարմինը երէկ շնորհակալական նամակ մը յղեց Լիբանանի մէջ Չուիցերիոյ դեսպանին՝ Չուիցերիոյ խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման համար:

Չուիցերիոյ խորհրդարանը, հակառակ թրքական սպառնալիքներուն, 16 Գեկտեմբերին ճանաչաւ Հայկական Յեղասպանութիւնը: Նախագահ Ժընեի եւ «Վօ» քանթոններու խորհրդարանները կանխած էին խորհրդարանի այս քայլը:

ԸՍՏ ՊՈՒՇԻ՝ ՍԱՍՏԱՄ ԱՐԺԱՆԻ Ե ԾԱՆՐԱԳՈՅՆ ՊԱՏԻՑԻՆ

ՍԱՍՏԱՄԻ ՇԵՏԵՒՈՐԴՆԵՐԸ ԱԿԱՆՈՒԱԾ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ ՊԱՅԹԵՑՈՒՑԻՆ ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ



Սյն պահուն, երբ ամբողջ աշխարհը հետաքրքրուած է Սատամ Հիւսէյնի ճակատագիրով եւ դատավարութեամբ, եւ երբ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ կը յայտարարէր, թէ ամէնէն ծանր պատիժին պէտք է ենթարկուի Իրաքի նախկին ղեկավարը իր գործած ոճիրներուն համար, Պաղտատի մէջ Սատամի հետեւորդները ակնուամբ բեռնակառք մը կը պայթեցնեն՝ տասը զոհ եւ 15 վիրաւոր պատճառելով:

Պաղտատի ոստիկանապետ Սապահ Ֆահէտ ըսաւ, որ զոհերուն թիւը բարձր է, որովհետեւ պայթումը տեղի ունեցած է խճուղու մէջ ու քանակ խաչմերուկի մը վրայ: Ֆահէտ աւելցուց, որ յարձակումին թիրախը քաղաքային զոհեր պատճառել էր, հետեւաբար անիկա ահաբեկչական արարք է, որովհետեւ շրջանին մէջ զինուորական թիրախներ չկան: Ոստիկանապետը յայտնեց նաեւ, որ վառելիքի փոխադրութեան համար գործածուող բեռնակառքը լեցուած էր ականներով ու պայթուցիկ նիւթերով: Ոստիկանութեան այլ պատասխանատու մը յայտնեց, որ պայթած բեռնակառքին մէջ գտնուող երկու անձեր այլ սպաննուած են, ենթադրել տալով, որ արարքը անձնասպանական գործողութիւն մըն էր: Ան աւելցուց, որ բեռնակառքը պայթած է՝ խաչմերուկին վրայ այլ ինքնաշարժի մը բախելով: Պայթումը տեղի ունեցած էր առաւօտեան ժամը 6:00ին:

Մինչ այդ, ամերիկեան ուժեր յայնածիր արշաւի մը կը ձեռնարկէին Սամարա քաղաքին մէջ, ուր խոռվորութիւններ արձանագրուած էին վերջերս: Ամերիկեան ուժերուն մէջքի փուշը դարձած է Սամարան, ուր Սատամի հետեւորդները գրեթէ անօրէյ դարձած յարձակումներ կը գործեն: Ամերիկացի զինուորներ կէս զիջերին ներխուժեցին Սամարա, ուր պայթեցուցին տասնեակ մը բնակարաններու դռները՝ խուլարկութիւններ կատարելու համար: Չինուորները կը յուսալին գտնել ու ձեռքաւարել իրաքցիներ, որոնք պահանջուածներու ցանկին վրայ կը գտնուին: Պահանջուած 29 անձերէն միայն ութ իող գտնուած է տուններուն մէջ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ԳԵՆԱՀԱՏԱՆՔԸ ԿԸ ՅԱՅՏՆԵ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Երէկ առաւօտ, 17 Գեկտեմբեր 2003ին, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս առանձին նամակներ յղելով Չուիցերիոյ երեք գլխաւոր եկեղեցիներու իողները պետերուն, ինչպէս նաեւ Չուիցերիոյ խորհրդարանի նախագահին, իր գնահատանքը յայտնեց չուիցերիական խորհրդարանին կողմին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման առթիւ: Ստրբե վեհափառ հայրապետին նամակը՝ ուղղուած Չուիցերիոյ հին կաթողիկեալ Սեւտարանական եկեղեցիներու պետերուն եւ խորհրդարանի նախագահին.

«Մեծ ուրախութեամբ իմացայ Չուիցերիոյ Դաշնակցային խորհրդարանին կողմէ 1915ին տեղի ունեցած Հայկական Յեղասպանութեան պատճառական ճանաչումը: Արդարեւ, խորհրդարանի այս որոշումը ոչ միայն քաղաքական ու ընկերային իմաստով մեծ դէպք մըն է, այլ նաեւ ան էապէս շօշափելի արտայայտութիւն մըն է Չուիցերիոյ ժողովուրդին եւ իր պետական կառոյցներուն ունեցած յանձնառութեան բարոյական, հոգեւոր եւ մարդկային արժէքներուն նկատմամբ: Արժէքներ, որոնք կը կապեն հիմը մարդկային արժանապատուութեան եւ իրաւունքներու, այլ խօսքով՝ ճշմարիտ մարդկայնութեան: Չուիցերիոյ երեք եկեղեցիները վճռական դեր կատարեցին Չուիցերիոյ խորհրդարանի այս որոշման մէջ: Ինչպէս դուք ձեր միացեալ հաղորդագրութեան մէջ կը յայտարարէք, դուք գործեցիք մեկնելով քրիստոնէական արժէքներէն, մասնաւորաբար արդարութեան եւ մարդկային իրաւանց սկզբունքներէն: Դուք անձնապէս ձեր քրիստոնէական վկայութիւնը բերիք Հայկական Յեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն, այս ձեռով արտայայտելով եկեղեցու ճշմարիտ կոչումը եւ Չուիցերիոյ իրաւ դիմագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՂՉՈՒՆԷ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԿՈՂՄԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱՇՈՒՄԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղար Համլէթ Գասպարեան երէկ լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին պատասխանելով «Երկիր» շաբաթաթերթի լրագրողի հարցումին յայտնեց, թէ Հայաստան կ'ողջունէ նախանցեալ օր Չուիցերիոյ խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման որոշումը, միաժամանակ նշելով. «Հայկական Յեղասպանութեան միջազային ճանաչումը առանձին եւ իրաւատու կողմէն չէր ընդունուած, որ ունի իր տրամաբանութիւնը. մենք չենք ցանկար, որ ան առնչուի հայ-թուրք առկալ երկխօսութեան»:

«Ճանչնալով Յեղասպանութիւնը, Չուիցերիա յարգանքի տուրք մատուցեց Օսմանեան կայսրութեան մէջ Եղեռնի զոհ դարձած միլիոնաւոր հայերու յիշատակին», դիտել տուաւ Գասպարեան: Ըստ Գասպարեանի, այդ որոշումը Չուիցերիոյ քաղաքական, մտաւորական, հասարակական լայն շրջանակներու, ինչպէս նաեւ չուիցերիական կապակերպութիւններու երկարամեայ աշխատանքի արդիւնքն է: «Այս որոշումը կ'ընդգծէ, թէ մարդկութեան դէմ գործուած ոճիրները անժամանցելի են», յայտնեց Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղարը:

Իր կարգին, Հ. Յ. Երուսաղեմի Միութեան Հայ Դատի Յանձնախումբի ատենապետուի ընկի. Հիւտա Չապոյեան Չուիցերիոյ խորհրդարանի որոշումին անդրադառնալով նշեց. «Կը շնորհաւորենք բոլոր կողմերը՝ թէ՛ քաղաքացիական, թէ՛ կառավարական, որոնք աշխուժ կերպով»

ԱԿՆԱՐԿ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

«Չուիցերիա պիտի կրէ որոշումին հետեւանքները»: Այս բառերով երէկ պաշտօնական Անգարան պոլիցապետ Չուիցերիան, որուն խորհրդարանը ճանաչաւ Հայկական Յեղասպանութիւնը: Ժընեի եւ «Վօ» քանթոններու կողմէ կատարուած ճանաչումները փաստօրէն նախապատրաստութիւնն էին Չուիցերիոյ դաշնակցային խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման:

Ուրեմն, Չուիցերիան եւս Քեպէքի նահանգի ճանաչումէն անմիջապէս ետք կու գայ աւելնալու Հայկական Յեղասպանութիւնը ճանաչած քաղաքներու, նահանգներու եւ պետութիւններու շարքին:

Պաշտօնական Անգարային ազդարարութիւնը սակայն առաջին անգամը չէ որ կ'ուղղուի Հայկական Յեղասպանութիւնը ճանաչող պետութեան մը: Դիւանագիտական ժամանակաւոր տագնապներ, միջպետական յարաբերութիւններու խլուրդ սպառնալիքներ կամ տնտեսական կապերու փլուզման յիշորտանքներ յտուած են Թուրքիոյ քաղաքական բեմերէն ամէն անգամ, որ պետութիւն մը ճանաչած է 20րդ դարու առաջին շեղասպանութիւնը: Փաստը կը մնայ փաստ, որ մանա քաղաքական սպառնալիքներ մնացած են անհետեւանք եւ նպատակադրուած են պարզապէս պոլիցապետի այլ պետութիւններ, խուսափելու համար պատմական ճշմարտութիւն մը հաստատող խորհրդարանի առած քայլերուն հետեւելը:

Իրականութիւնը սակայն այն է, որ նոյնիսկ այդ պոլիցապետները մնացած են ապարդիւն եւ ճանաչման յաղթարշաւը շարունակուած է անխափան, ներառնելով իրերայաջորդ խորհրդարաններ: Երկիր մը (աւելի ճիշդ՝ պետութիւն մը) պիտի կրէ այս որոշումներուն հետեւանքները. յամենայնդէպս՝ ոչ Չուիցերիան եւ ոչ ալ Հայկական Յեղասպանութիւնը ճանաչած ու տակաւին ճանաչող երկիրները...:

«Ա.»



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈԳԵՐ

Լիբանանեան կեանքի երևույթներ

ԼԻԲԱՆԱՆՅԻՆ ՄՆԱՅՈՒՆ ԿԵՐՊՈՎ ԵՆԹԱԿԱՅ Է ԹՈՒՆԱԲՈՐՈՒՄԻ

Մարդիկ ընդհանրապես կ'ուտեն առողջ ու աշխուժ ըլլալու, եւ իրենց մարմինն անհրաժեշտ սնունդը հայթայթելու համար: Ուտելիքը մարդուն անբաժանելի ընկերն է, առանց որուն ան դժուար թէ գոյատեւէ եւ ապրի երկար ժամանակ:

Շատ չեն այն անձերը, որոնք կը նախընտրեն ապրիլ կեանք մը, ուր ուտելու ստիպուած չըլլան, որովհետեւ անոնք կ'ուտեն իրենց պարտականութիւնը եւ ո՛չ աւելի: Մարդոց համար ընդհանրապէս ուտելիքը հաճոյքի աղբիւր է՝ սնունդ ըլլալու կողքին: Ան ներկայ է ամէն տեղ եւ բոլոր ժամանակներուն, տեսակաւոր եւ համադամ ուտելիքները միշտ անպակաս կ'ըլլան խնձրեցներէ: Ուտեստեղէններով լեցուն սեղաններուն շուրջ է, որ բուն ուրախութիւնը տեղի կ'ունենայ: Բնականաբար, այս երեւոյթը կը տարբերի ժողովուրդէն՝ ժողովուրդ, որովհետեւ իւրաքանչիւրը ունի մօտեցման իր ձեւերը, իր իւրայատուկ ուտելիքները եւ սննդակառուցը:

Լիբանանի մէջ ուտելիքը առաջնակարգ տեղ կը գրաւէ քաղաքացիներուն մօտ եւ գրեթէ բոլոր ընկերային ու ընտանեկան հարաքները եւ երեկոյններու զինքնուրուտումը: Լիբանանեան ուտեստեղէններով յագեցած սեղաններու գոյուլթեանը: Մակայն ուրախութեան տուն տուող ուտելիքները եւս այսօր սկսած են վտանգել քաղաքացիին կեանքը: Մանաւանդ այս տարուան ընթացքին շեշտուեցան փճացած ուտելիքներու, կաթերու եւ մածոններու մասին շրջան ընող լուրերը եւ լիբանանցի սկսած զգուշանալ որեւէ տեղէ որեւէ արտադրութիւն գնելէ: Շրջան ընող լուրերը, փաստօրէն, ամբողջութեամբ սուտ չէին, որովհետեւ արձանագրուեցան թունաւորումի եւ հիւանդութեան պարագաներ հակոդութեան բացակայութեան պատճառով փճացած ուտելիքները բազմացան վաճառատուներուն եւ մանաւանդ նպարավաճառներուն մօտ:

Լիբանանի մէջ, ինչպէս ամէն բանի պարագային, ուտելիքներու վրայ դրուած հակոդութիւնը եւս դարձած է ձեւակաւ: Այս հակոդութիւնը կը կիրարկուի որոշ հաստատութիւններու եւ շրջաններու մէջ, իսկ այլ հեռակայ շրջաններու պարագային ան գրեթէ ամբողջութեամբ կը բացակայի: Խորքին մէջ ուտելիքներու հակոդութիւնն ու քննութիւնները պէտք է սկսին անոնց արտադրութեան վայրէջ:

Գործարաններուն մէջ մասնագէտներն ու պետական պատասխանատուները պէտք է քննեն հում նիւթներուն թարմութիւնը, հսկեն մեքենաներուն մաքրութեան, պատրաստութեան ձեւերուն, գործաւորներու օգտագործած հարմարանքներուն եւ ձեւաւորմանը, արտադրատեղիներուն եւ փաթեթաւորման գործընթացներուն վրայ: Քննութեան ենթադրուած պէտք է յատուկ տեղեկագիրներ տան գործատէրերուն, իսկ հակառակ պարագային

պէտք է յատուկ թղթածը՝ րար պատրաստեն, ներկայացնեն գործարանին խոցելի կէտերը, որոշ ժամկէտ մը տան զանոնք սրբագրելու: Այս ժամկէտին աւարտին տեղի ունեցած վերաքննութեանէ ետք, եթէ վիճակը բարելաւուած չըլլայ, անոնք կրնան դատ բանալ եւ նոյնիսկ հարցին բարդանալուն պարագային փակել գործարանը:

Նոյն ձեւի հակոդութիւն պէտք է բանեցնել այլ երկիրներէ ներածուող արտադրութիւններուն վրայ: Լիբանան մուտք գործելէ առաջ, արտադրութիւններն ու անոնց գործածութեան ժամկէտը պէտք է ստուգուի, եւ անկէ ետք այդ արտադրութիւնները պէտք է բաժնուին առեւտրականներուն եւ խանութներուն:

Այլ ձեւի հակոդութիւններ եւ քննութիւններ պէտք է ի գործ դրուին նաեւ վաճառատուներուն, խանութներուն, մտավաճառներուն եւ ուտելիքներու հետ առնչուող բոլոր վայրերուն մէջ: Այդ կեդրոնները պէտք է ունենան յատուկ վկայագիր մը՝ տրուած առողջապահութեան նախարարութեան կողմէ: Այս վկայագիրը պէտք է վերանորոգուի տարեկան դրութեամբ:

Այս բոլորը, սակայն, կը մնան օրէնքի եւ սկզբունքներուն սահմաններուն մէջ, որովհետեւ իրողական պետի վրայ այս մէկը



մաքրութեան պատճառը կառավարութեան կողմէ դրուած հակոդութիւնը չէ, որքան խանութներուն յատուկ վկայագիր մը՝ Այդ խանութները, բնականաբար, չեն տատամար դիմելու համապատասխան կողմերուն, որպէս զի հարկ եղած քննութիւնները կատարեն եւ առողջապահութեան յատուկ վկայագիրներ տան մանաւանդ անոնքի: Պատճառատուներուն: Պատճառատուներուն:

դուրս կու գան տնօրէնին «նուիրելով» առողջապահութեան վկայագիրը:

Սակայն, հակառակ այս բոլորին, տակաւին կան իրենք վիրենք յարգող պաշտօնեաներ եւ պատասխանատուներ, որոնք իրենց աշխատանքը լիովին կը կատարեն: Կառավարութեան կողմէ հակոդութեան ալիքը կը շեշտուի եւ կը յղմանքներ թունաւորումներուն մէջ: Առողջ նիւթերու լուրերը բազմանան եւ պարագաներ բացայտուին: Այն ատեն կառավարական պաշտօնեաներ ու հսկիչները աւելի ուշադիր կ'ընդունուին կառավարութեան կողմէ:

Պէտք է շեշտուի շրջակայ կարգ մը վայրերու մէջ մանաւանդ, ուր տուներուն եւ ընկերներուն կացութիւնը ինքնին երանելի չէ, աւելի եւս տարածուած է փճացած արտադրութիւններու վաճառք: Ժամկէտի աւարտին մօտեցած ուտելիքներուն գինը ինքնաբերաբար կը նուազի եւ այդ վայրերուն մէջ խանութներունցող վաճառականները կը նախընտրեն այդ արտադրութիւններով լեցնել իրենց խանութները:

անոնց ժամկէտին, ինչպէս նաեւ առանց երկար մտածելու կը գնեն ուտելիքները, որովհետեւ անոնք աժան կ'ըլլան: Խորքին մէջ մեծ ընտանիքի մը հայրը նոյնիսկ եթէ երկար մտածէ, պիտի չկարենայ կշտացնել տունը իր գալուտին սպասող իր քանի մը զաւակները: Շատ ընտանիքներ չունեցողներուն մօտ աւելի եւս կը շեշտուի թունաւորումի պարագան, որովհետեւ զանազան տուեալներու պատճառով անոնք աւելի եւս ենթակայ են անոր:

Վերջերս լայն աղմուկ բարձրացաւ փճացած կաթնեղէններու եւ պանրեղէններուն վերաբերեալ, որովհետեւ բացայտուեցան կարգ մը պարագաներ եւ քանի մը քաղաքացիներ թունաւորուեցան:

Կառավարութիւնը, հարցին բարդացումը կանխարգելելու համար, իսկոյն խտտացուց իր հակոդութիւնը: պետական քննիչներ այցելեցին վաճառատուներն ու խանութները եւ կատարեցին փճացած արտադրութիւններուն վաճառքը:

Յիշորոշող հանգրուանին լուսարձակի տակ առնուեցաւ մեղէններուն հարցը: Աժան գիներով փճացած եւ ոչ թարմ մեղէններուն վաճառքին երեւոյթը տարածուեցաւ լիբանանեան զանազան շրջաններուն մէջ: Առողջ նիւթերու լուրերը բազմանան եւ պարագաներ բացայտուին: Այն ատեն կառավարական պաշտօնեաներ ու հսկիչները աւելի ուշադիր կ'ընդունուին կառավարութեան կողմէ:

Մեղէնի սիրահար լիբանանցիին համար այս երեւոյթը իսկական մտահոգութեան սկսաւ վերածուել, որովհետեւ իր բոլոր հոգերուն կողքին, ուտելիք ապահովելու համար թափած իր քրտինքին կողքին, ան դրուեցաւ ուտելիքներուն թունաւոր կամ փճացած չըլլալը ստուգելու պարտադրանքին տակ: Լիբանանցի կողմէն ցուց իր վստահութիւնը վաճառատուներուն եւ գործարաններուն նկատմամբ: Ան սկսաւ աւելի ուշադիր ըլլալ եւ ստուգել իր գնած ուտելիքները:


Տօնական օրերու նախօրեակին, երբ լիբանանցիներուն սեղանները կը լեցուին ուտելիքներով եւ համադամ ճաշերով, լիբանանցիները յաւելեալ ուշադրութեամբ կը փորձէ առաւելազոյն չափով խնայել իր հիւրերուն թունաւորումն ու լուրախութեան պահը անհաճոյ դարձնելը, սակայն լուծուող այս չէ եւ հարցը տակաւին կը մնայ առկայ:

չէ, որ տեղի կ'ունենայ, այլ պատկերը ամբողջովին տարբեր է: Լիբանանեան խանութները եւ վաճառատուները արտադրութիւնները կը գնեն եւ կը ծախեն իրենց քմահաճոյքին համաձայն: Անոնք կը վարեն իրենց յարմարող քաղաքականութիւնը՝ առանց հետեւելու ճշդուած օրէնքներուն եւ սկզբունքներուն:

Մարաքաղաքին մէջ վիճակը որոշ չափով աւելի լաւ է, որովհետեւ քաղաքացիներուն համար անհրաժեշտ է գէթ տեսանելի մաքրութիւնը, արտադրութիւններուն եւ ուտելիքներուն հրամցուած ձեւը, ստուգելու եւ թուղթներուն մաքրութիւնը, զորով անքորութիւնը, գործաւորներուն մաքրութիւնը եւս կ'ընդունուի: Մէկ խօսքով, եղած

րագան նոյնը չէ նեղ թաղերուն մէջ, մարդոց նայուածքներէն հեռու գտնուող խանութներուն պարագային, որոնց ընդհանրապէս չեն այցելել պարագային առանց մանրամասն քննութեան կու տան հարկ եղած թուղթը, որովհետեւ խորքին մէջ պետական պաշտօնեան եւս զգուշ եւ այս աշխատանքին եւ յոգնած է աշխատիլ ու իր իրաւունքները չզանձելու իրողութեան: Տարածուած երեւոյթ է եւս այս հսկիչներէն ուսուցող տրուած կարգաւորումները խանութները կամ վաճառատուն մուտք գործելու եւ քննութիւններ կատարելու փոխառուները երբեմն թիւնն ու կոկիկութիւնը եւս այն: Մէկ խօսքով, եղած

նուազ գինով գնուածները բնականաբար նուազ գինով պիտի վաճառուին, բան մը, որ ձեռնուրէն աղկամ վաճառատուն մուտք գործելու եւ քննութիւններ կատարելու փոխառուները երբեմն թիւնն ու կոկիկութիւնը կ'այցելեն տնօրէնութեան գրասենեակը եւ անկէ



նուազ գինով գնուածները բնականաբար նուազ գինով պիտի վաճառուին, բան մը, որ ձեռնուրէն աղկամ վաճառատուն մուտք գործելու եւ քննութիւններ կատարելու փոխառուները երբեմն թիւնն ու կոկիկութիւնը կ'այցելեն տնօրէնութեան գրասենեակը եւ անկէ

րութեամբ կը փորձէ առաւելազոյն չափով խնայել իր հիւրերուն թունաւորումն ու լուրախութեան պահը անհաճոյ դարձնելը, սակայն լուծուող այս չէ եւ հարցը տակաւին կը մնայ առկայ:

ՄՆՆՊԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ մնալու Գաղտնիքները

ԼԱՅՆԱՂԻԻ ՊՐԿՈՒՄԸ

Բ.

ԳԵՐԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ ՈՒ ԼԱՅՆԱՂԻԻ ՊՐԿՈՒՄԸ

Լայնաղիի պրկում ունեցողներին շատեր գերզգայուն են կարգ մը ուտելիքներու նկատմամբ, ինչպէս՝ կաթին: Վերոյիշեալ անձերուն վիճակը կը բարելաւուի, եթէ դադարեցնեն այդ ուտելիքներուն սպառումը: Ուսումնասիրութիւններ կատարուեցան լայնաղիի պրկում ունեցող 189 անձերու վրայ: Ի յայտ եկաւ, թէ անոնց 48 առ հարիւր դիւրագոյն տրուեցան յատուկ սննդականոններ, զերծ՝ գերզգայնութիւն պատճառող ուտելիքներէ: Երեք շաբաթ ետք վերոյիշեալ անձերուն առողջական վիճակը բարելաւուեցաւ: Ի յայտ եկաւ, թէ այդ անձերէն իւրաքանչիւրը դիւրագոյն է նուազագոյնը երկու, իսկ առաւելագոյնը՝ հինգ ուտելիքի նկատմամբ: Անոնց 41 առ հարիւր դիւրագոյն է կաթի եւ կաթնեղէններու, իսկ 39 առ հարիւր՝ ընդհանրապէս նկատմամբ: Մէկ տարի յատուկ սննդականոնի հետեւելով ոմանք կրցան նուազեցնել լայնաղիի պրկման ախտանշանները, իսկ ուրիշներ կրցան ամբողջովին անհետացնել զայն:

ՎՆԱՍԱԿԱՐ ՈՒՏԵԼԻՔՆԵՐԸ

Ինչպէս ըսինք, լայնաղիի պրկում ունեցողներուն որոշ համեմատութիւն մը դիւրագոյն է կարգ մը ուտելիքներու նկատմամբ: Հետեւեալ ուտելիքները դիւրագոյնութիւն կրնան պատճառել: ցորենի եւ կորեկի նման ընդեղէնները, կաթը եւ կաթնեղէնները, սուրճը, թէյը, սուրճը, զետնախնձորը, սոխը եւ լեմոնի տեսակները:

ՅՈՐԵՆԸ ԵՒ ԼԱՅՆԱՂԻԻ ՎՐԱՅ ԻՐ ԱՉԳԵՑՈՒԹԻՒՆԸ

Ուսումնասիրութիւններ ցոյց տուին, թէ լայնաղիի պրկում ունեցողներուն նեղութիւն տուող գլխաւոր ուտելիքը ցորենն է: Վնասող ուտելիքներուն տեսակը կը տարբերի մէկ անձէն միւսը, նայած թէ անոնք ի՞նչ ընթացք կը ստանան ենթակային մարմին, մասնաւորաբար՝ մարսողութեան գործարանին մէջ: Յիշեցնենք, որ անոնք որոնք փորձարարութիւն կ'ունենան լայնաղիի պրկման պատճառով, պէտք է դադարին որոշ ուտելիքներ սպառելէ: Նոյնպէս պէտք է ընեն նաեւ անոնք, որոնք անդադար աղիքային եւ գլուխի ցաւեր կ'ունենան: Իսկ անոնք, որոնք պնդութիւն կ'ունենան լայնաղիի պրկման պատճառով, պէտք է չունեն իրենք զիրենք զրկելու կարգ մը ուտելիքներէ: Մասնագէտներ կ'ըսեն, թէ ցորենի փոխարէն կարելի է ուտել բրինձ, որ ոչ մէկ վնաս կամ ժխտական ազդեցութիւն ունի լայնաղիի պրկում ունեցողներուն համար:

ԻՆՉՈՒՎ ԿԱՐԳ ՄԸ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ ԿԸ ԳՐԳՈՒՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Աղիքներուն, մասնաւորաբար՝ հաստ աղիքին մէջ, կը գտնենք մանրէներու տեսակներ: Անոնցմէ ոմանք առանց օդի կ'ապրին, իսկ ուրիշներ օդի պէտք ունին ապրելու համար: Կարգ մը ուտելիքներ կը գրգռեն այս մանրէները, մասնաւորաբար օդով ապրողները, եւ պատճառ կը դառնան մարսողական խողովակին մէջ անոնց բազմանալուն: Հետեւաբար, լայնաղիի պրկում ունեցող անհատը դիւրագոյն կը դառնայ որոշ ուտելիքներու նկատմամբ եւ նեղութիւն կը զգայ, երբ անոնք սպառէ: Նոյն այս պատճառով, անհատը կամ փորձարարութիւն կ'ունենայ կամ ալ պնդութիւն:

ԿԱՐԳ ՄԸ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ՝ ԼԱՅՆԱՂԻԻ ՊՐԿՈՒՄԸ ԴԵՄ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Եթէ կը տառապիս լայնաղիի պրկումէ, պէտք է հետեւիս հետեւեալ օգտակար ցուցմունքներուն:

- Պէտք է վստահ ըլլաս, թէ անտանջանները լայնաղիի պրկման պատճառով է, կամ կարգ մը ուտելիքներու նկատմամբ դիւրագոյնութեան պատճառով: Յիշեցնենք, որ կաթը, կաթնեղէնները, սուրճը, թէյը, ցորենը, կորեկը եւ սուրճը աղիքները գրգռող ուտելիքներ են:
- Գիտնալու համար, թէ որեւէ կապ գոյութիւն ունի՞ սննդականոնիդ եւ լայնաղիի պրկումին յառաջացող ախտանշաններուն միջեւ կամ ոչ, պէտք է մէկ շաբաթուան ընթացքին, օրական հերթափոխութեամբ արձանագրես սպառած ուտելիքիդ ցուցակը, ինչպէս նաեւ այն բոլոր փոփոխութիւնները եւ աղիքային ու այլ ցաւերը, զորս կը զգաս որոշ ուտելիքներ սպառելէ ետք: Այսպիսով, կրնաս գիտնալ, թէ ո՞ր ուտելիքը կը վնասէ աղիքներուն:
- Հետեւաբար, եթէ տեսնես, թէ որոշ ուտելիք մը կը վատթարացնէ աղիքներուդ վիճակը, նախընտրելի է, որ խուսափիս անկէ:
- Եթէ խիստ փորձարարութիւն ունիս, պէտք է մեծ քանակութեամբ ցորենի թեփ սպառես, իսկ եթէ գերզգայուն ես ցորենի նկատմամբ, զայն կրնաս փոխարինել բրինձի թեփով:
- Եթէ պնդութիւն ունիս, պէտք է սպառես բնաթելերով հարուստ ուտելիքներ, ինչպէս՝ բանջարեղէններ եւ պտուղներ:



Կնոջական

ՓՈՐՁ-ԸՆԴՈՒՄ

ՈՒՐԻՇՆԵՐ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՏԵՄՆԵՆ ՉԵՉ

Մենք ուրիշին վրայ չենք ձգեր այն տպաւորութիւնը, որ մենք ունինք մեր մասին: Յաճախ ուրիշներ տարբեր ձեւով կը տեսնեն եւ տարբեր կարծիք կը կազմեն: Գիտնալու համար, թէ արդեօք ուրիշներու վրայ ի՞նչ տպաւորութիւն կը ձգէք, պատասխանեցէք այս փորձ հարցարանին:

1
Դիմակահանդէսի մը պիտի նախընտրէք ծպտուելը թե՛
ա.- Օղանաւի սպասարկող:
բ.- Արեւելեան պարուհի:
գ.- Պարիկ:

2
Ձեր քաղաքը առաւելաբար՝
ա.- Վայելուչ է՝ կատուի քաղաքներին պէս:
բ.- Կտրուկ եւ համաչափ է՝ զինուորականի պէս:
գ.- Արագ է՝ նետի պէս:

3
Երեխաները ձեզ կը սիրեն, որովհետեւ
ա.- Հէքիաթներ կը պատմէք:
բ.- Պտույտի կը տանիք:
գ.- Աչքիփուկ կը խաղաք:

4
Ձեր հագուստներուն մէջ տիրական գոյնն է՝
ա.- Գինեգոյնը:
բ.- Լազուարդը:
գ.- Սրճագոյնը:

5
Ձեր խօսելաձեւը առաւելաբար
ա.- Կտրուկ է:
բ.- Եղանակաւոր է:
գ.- Ձիւ է:

6
Երբ ձեր աչքերը կը դրուատեն, անոնց մասին կ'ըսեն՝
ա.- Մեղմ են:
բ.- Գրաւիչ են:
գ.- Ժպտուն են:

7
Ինչ կը վերաբերի շպարին՝
ա.- Օրական կը շպարուիք:
բ.- Հազուադէպօրէն կը շպարուիք:
գ.- Երբեք չէք շպարուիր:

8
Ձեր նախասիրած երգն է՝
ա.- «Կոռնկոն»:
բ.- «Մեր Հայրենիք»:
գ.- «Ով դու գեղեցիկը»:

9
Ձեր մտերիմ ընկերուհիին տարեդարձին կը նուիրէք:
ա.- Անուշահոտ մը:
բ.- Փունջ մը ծաղիկ:



գ.- Ծպարի ներկեր:

10
Լուրջ հարցի մը մասին մտածելու համար՝
ա.- Կ'առանձնանաք ձեր սենեակը:
բ.- Պարտէզ կ'իջնէք եւ կը քալէք:
գ.- Ձեր մտերիմ ընկերուհիին կը հեռաձայնէք:

11
Երբ անտրամադիր զգաք՝ փոխուելու համար
ա.- Շուկայ կ'երթաք եւ գնում կ'ընէք:
բ.- Բաժակ մը գինի կը կոնծէք:
գ.- Վարսայարդարին կ'երթաք:

12
Երբ սրահ մը մտնէք դասախօսութեան մը ներկայ
գտնուելու համար՝
ա.- Կ'ուղղուիք դէպի առաջին կարգերը:
բ.- Վերջին շարքը կը նստիք:
գ.- Շուարած ձեր շուրջը կը նստիք:

13
Երբ հաւաքովի մը ընթացքին ուրախ էք եւ ձեր
արամադրութիւնը բարձր է՝
ա.- Կ'երգէք:
բ.- Շուրջպարի կը մասնակցիք:
գ.- Համակ ժպիտով կը զրուցէք:

14
Ժողովներու ընթացքին՝
ա.- Յաճախ ձայն կ'առնէք:
բ.- Կրակարկան կեցուածք կ'որդեգրէք:
գ.- Հարցերը բարդացնողն էք:

15
Ցուցափեղկի մը մէջ դուք ձեզի դիտելով՝
ա.- Ինքնագոհ կը ժպտիք:
բ.- Կը դժգոհիք ձեր գիտութեան:
գ.- Արագ կ'անցնիք եւ չէք ուզեր դուք ձեզի դիտել:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
ա	★	■	■	♥	■	■	♥	★	♥	■	♥	■	♥	♥	★
բ	♥	♥	★	■	♥	★	■	♥	■	♥	■	★	■	■	♥
գ	■	★	♥	★	★	♥	★	■	★	★	★	♥	★	★	■

Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը
★ է, շատ ուրախ խառնուածքով անձ էք, ձեր տրամադրութիւնը՝ միշտ բարձր, ձեր բարեկամները հաճախ կ'առնեն ձեր ներկայութեան: Աշխարհին բացուած, ինքնաբերական եւ լաւատես անձ էք: Ձեր շրջակայքին արեւի ճառագայթներէն էք, ոչ ոք կը հրաժարի ձեզմէ:
Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը
♥ է, հաւասարակշռուած, հանդարտ անձ մըն էք, ձեր խօսքերը կը խաղաղեցնեն ձեր շրջակայքին մտքերը: Շատեր իրենց գաղտնիքները ձեզի կը վստահին,

քանի որ ուշադիր լսող եւ արդարադատ էք: Բոլորն ալ գիտեն, թէ իրենց դժուար պահերուն կրնան ապահով ապաստան գտնել ձեր մօտ:
Եթէ ■ երու մեծամասնութիւն մը ապահոված էք, կրակ ու բոց, կեանքով լեցուն, պայքարող եւ մինչեւ ծայր գացող անձ էք: Երբեք տեղի չէք տար, ոչ ալ կը նահանջէք: Գիտէք կեանքէն ինչ կ'ուզէք եւ հոգ չէ թէ տարիներ ետք, բայց եւ այնպէս կը հասնիք ձեր նպատակին: Այսուհանդերձ, զգուշացէք անտեղի յամառութեանէ եւ լսեցէք մտերիմներուն խորհուրդը:

ԿԻՆԵՐԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՅՐՈՅԹԸ ՊԵՏՔ ԶԵ ԶՍՊԵԼ

Բրիտանական ուսումնասիրութիւն մը կիներուն կը թելադրէ, որ չզսպեն իրենց զայրոյթը, քանի որ այդ ձեւի գրգռումը ներքնապէս աւելի կ'անհանգստացնէ եւ կը վնասէ առողջութեան:
Նոյն վիճակագրութեան համաձայն, զայրոյթը պոռալով կամ լալով չէ, որ պիտի արտայայտուի, այլ պարզապէս... գրելով:
Այո՛, պէտք է թուղթմատիտ առնել եւ արձանագրել այդ պահու զգացումները՝ հանդարտելու եւ պաղարկելու ձեւով:
Երբ ձեր կինը կը խօսէ ձեր հետ, ինչպէս խօսիք իր հետ:



Խրտչին հետեւեալ չորս տեսակի կիներն են:
Այր մարդուն հաւասարի ձգտող եւ իր իգական նուիրութիւնը մոռցող կիները:
Ինքզինք եւ իր կամքը պարտադրող կիները:
Շատախօս եւ յաճախ դժգոհ կիները:
Յոռեցեալ եւ ժխտական կեցուածք որդեգրող կիները:
Քարեքաղցր եւ իր իգական կիններուն կը թելադրէ պահել իրենց իգականութիւնը (անոնց գիջելու իրենց իրաւունքներէն), ըլլալ իրաւունքներէն, ըլլալ աւելի գիջող եւ հանդուրժող, համակերպող եւ զրական...
Այս առաւելութիւնները ունեցող երիտասարդուհիներն ու կիները չեն կրնար անտարբեր ձգել կայրերը:

ԱՄՈՒՆԱՅԱԾ ԶՈՅԳԵՐ ԱՄՍԸ ԵՆԳԱՄ ՄԸ ԿԸ ՎԻՃԻՆ

Եւրոպական ուսումնասիրութեան մը համաձայն, աշխարհի մոռցնալը ցած գոյգերուն կէսը ամիսը առնուած անգամ մը կը վիճին երեխաներուն կամ դրամի պատճառով:
Վիճակագրութեան համաձայն, վերոյիշեալ վիճակներուն 75 առ հարիւրը կապուած է երեխաներուն դատարարական հետ, իսկ մնացեալ 25 առ հարիւրը կը վերաբերի նիւթական դժուարութիւններուն:
Վիճակագրութեան համաձայն, վերոյիշեալ վիճակներուն 75 առ հարիւրը կապուած է երեխաներուն դատարարական հետ, իսկ մնացեալ 25 առ հարիւրը կը վերաբերի նիւթական դժուարութիւններուն:

ԱՅՐԵՐՈՒ ԿՈՂՄԵ ՆՎԱՍՈՐԺ ՆՎԱՍՏՈՂ ԿԻՆԵՐ


Քոլորատոյի համալսարանի դասախօս եւ հոգեբան Ժ. Քլարքի պատրաստած մէկ տեղեկագիրին համաձայն, այրերը կը

ԳԵՂԵՅԻԿ ԿԻՆԵՐԸ... ՎՏԱՆԳԱՒՈՐ

ԽՈՐԱԳԻՐ

ԸՆԿՈՅԶՈՎ ԵՒ ԽՆՁՈՐՈՎ ԱՂՅԱՆ

Տօնական օրերու նախօրեակին, ահաւասիկ աղցանի նոր տեսակ մը, որ պիտի ճոխացնէ ձեր ճաշացուցակը եւ նորութիւն պիտի ըլլալ ձեր հիւրերուն:



Բաղադրութիւն
100 կրամ ընկոյզ:
2 խնձոր:
Կիտրոնի մը հիւթ:
10 սանթիլիթր քաղցր սեր:
80 կրամ մայրնէզ:
Հազարի քանի մը տերեւ:
ձերմակ համեմ:
Աղ:

Պատրաստութիւն
Հինգ-վեց ընկոյզ մէկ կողմ դրէք զարդարանքի համար, մնացեալը ջաղացքէ անցընել:
Խնձորները մաքրել, կեղուկ եւ բարակ մատիկներու պէս կտրուել: Բոլորը խորունկ ամանի մը մէջ լեցնել եւ վրան կիտրոնի հիւթը թափել:
Ելեկտրական գործիքով սերը զարնել, մայրնէզը քիչ-քիչ աւելցնել, մինչեւ որ միատարր թացան մը ստացուի:
Թացանին աւելցնել աղն ու համեմը, ապա՝ խնձորն ու ընկոյզը:
Ձմանին բերանը գոցել եւ 20 վայրկեան սառնարանը պահել:
Հազարի տերեւները լուալ, ցամքեցնել եւ ներկայանալ ամանի մը յատակը ծածկել, վրան լեց-

նել սառնարանէն հանուած աղցանը եւ երեսը զարդարել ընկոյզի կտորներով:
Բարի՛ ախորժակ:

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայն» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՓԱՄՐ 5:00:

ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ քացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՇԱՐԹՈՒԱՆ ԲԱՆԱՍՏԵՆՇՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ՄԵՐԸ

Հայաստան աշխարհ,
Դու մե՛րը եղար ու մերը չեղար,
Դրա համար էլ մենք քեզ սիրեցինք սիրահարի պէս...

Դու մե՛րը եղար,
Ինչպէս որ մերն է մեր երակներում հոսող արիւնը,
Եւ մերը չեղար,
Ինչպէս մերը չէ վարագայ սարի արեւածագը,
Սասնայ անտառին իջնող մանուշակ,
Մշոյ դաշտերը շոյող սօսափը...
Դու մօտիկ՝ եղար
Սրտիդ սրտիդ մեր կոշտ ձեռքերին հաղորդելու չափ,
Եւ հեռու եղար՝
Սահմանից այն կողմ
Անի կարմիր արեւակներից մեզ երեւցող
Մայր - տանարի՛ պէս:
Դուք տար հո՛ղ եղար
Մեր պիրիկ խփերի տեղափոխում հիւր,
Մեր գգուանքներից ծլարձակող հո՛ղ,
Եւ միրաժ եղար

Կապույտ, անշուշտ ու անբռնելի,
Մենք՝ անվերջ հասնող,
Իսկ դու՝ հեռացող, անվերջ հեռացող...

Հայաստան աշխարհ,
Դու այսպէ՛ս եղար,
Եւ դրա համար մենք քեզ սիրեցինք
Ո՛չ հարագատի հանդարտիկ սիրով,
Այլ՝ սիրածի՛ պէս, սիրահարի՛ պէս.
Ցաւո՛տ, ցաւախա՛ռն
Երագով, լոյսով, երգող տխրութեամբ,
Մերք խոզելով,
Մերք հաշտուելով,
Քո գրկով՝ անգամ՝ քեզ կարօտելով,
Քեզ կորցնելու ահի՛ց տագնապ ծ,
Քեզ ունենալու խիճիկի՛ց՝ երջանի՛կ,
Եւ բախտիդ համար անվերջ, ամեն պահ մենքն ի պարտի վ...
Հայաստան աշխարհ...

ՍԻՒՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ



THE EDUCATION DEPARTMENT at HAIGAZIAN UNIVERSITY

invites you to a lecture on MOTIVATION IN EDUCATION

Presented by DR. RAJA T. NASR (Professor of Education, Marymount University, VA)

Thursday December 18, 2003 - 7 p. m. Haigazian University Auditorium - Kantari

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱԲԸԼ ԳԵՈՐԳ ԱԲԸԼԵԱՆԻ (սարկաւագ) մահւան Ա. տարեդիցից անիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Ժիւնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱԼԻՍ ՄԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ (ծնեալ՝ Տէր Սահակեան) մահուան քառասունցից անիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Էշրեֆիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՇԻՐԱԿ

ՏՊԱՐԱՆ • ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆ

Առևտրական Տպագրութիւն

Այցեւորներ - Նամակի թուղթեր - Պահարաններ Թողարկումներ - Հաշուեցոյցներ - Ստացագիրներ Որոշակներ - Պիտակներ - Կնիքներ - Ելն.

Միութենական եւ Դպրոցական Տպագրական Աշխատանքներ

Յայտագիրներ - Հրահրատմութիւն - Օրացոյցներ Վիճակացոյցներ - Վկայականներ - Տարեգրքեր Պարբերաթերթեր - Ելն.

Հարսանեկան Զաղտերու Ծոխ Հաւաքածոյ

Հարպոյեան Կեդրոն • Bloc C • Համուտ • Հեռ. 01 253008

Բժականոր Աշխատանք • Սրագ Սպասարկութիւն • Սերտուած Գիներ

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5617 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11

Chessboard diagram with alternating black and white squares.

ՇՈՐԻՉՈՒԱԿԱՆ ՌԻՂԱՇԱՅԵԱՏ

- 1. Ուստարդէտ - Անորոշ դերանուն: 2. Զարիքնիւթեւ - Իգական անուն: 3. Անպէտ - Աղբիւր: 4. Կարծր շինանիւթ (հակ.) - Մահամտական: 5. Ստացական ածական - Մեկնուն - Չայանիչ: 6. Աղանիւթի տեսակ - Աղամանդ: 7. Տարիք - Ճննդագրի թուուն: 8. Լաւա - Բազմութիւն: 9. Էգ թռչուն - Կրկնուած ձայնաւորներ - Սեփականութիւն: 10. Ցուցական ածական - Պարսիկ կայսր (հակ.): 11. Հուր - Համադասական շարժական:

- 1. Հերձաբարէ տախտակ - Կախարդ: 2. Յերեկ օր - Հայերէն առակին թերթը հոն լոյս տեսաւ: 3. Վայրի ձարխտ - Պարուն: 4. Կնոջ ամուսնոյն քրոջ ամուսինը - Ժողով: 5. Սրունքի մեծ ոսկորը - Այսինքն (հակ.) - Յարբերական դերանուն: 6. Դրսեցի: 7. Սուզակէտ - Ճրագալոյց, նաւակատիք: 8. Ձիւն ծածկոց: 9. Նախանձիլ - Միաշարժ: 10. Միւս - Բրտոն, կակուղ հող: 11. Կրկնուած բաղաձայններ - Արորի բռնատեղ - Մանրաձիլ:

11x11 grid with letters and numbers for a word search puzzle.

ԹԻԻ 5616 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'Պէյրուսի սակարանի մէջ օտար դրամահիշներու փակման սակագինները'.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՈՍՎԻ Անգլիական մէկ ոսկի Իրանեան մէկ ոսկի'.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՍՄԵՐԻՅԱԿԱՆ ՖՐԱՆՔ ԶԱՓՈՒՆԱԿԱՆ ԵՒՆ'.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՍՄԵԼ ԵՄԱՆՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԿԱՆ'.

ԼՈՒՍԱՑԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՏԻՆԱԿ ԿՐԻՄԻԱՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ) Յարգեցէք ուրիշներուն կեանքին վերաբերող հարցերը: Եթէ ձեր կարծիքը հարցնեն տուեալ խնդիրին շուրջ, եղէք արդար ու անկեղծ: ՅՈՒՆ (21 Ապրիլին 21 Մայիս) Օրը յարմար է ձեր որոշումները գործադրելու: Ձեզի պիտի միանան ձեզ սիրող անձերը: Օգնեցէք ձեզմէ տկարներուն, որպէսզի գոհունակութիւն ունենանք: ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս) Ձեր աշխատանքը պիտի գնահատուի նիւթապէս եւ բարոյապէս: Օրը ունի լաւ եւ հաճելի պահեր: Մի՛ մոռնաք հիւրասիրելու անակնկալ հիւրերը: ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս) Շատ եսակեզրոն դարձած էք, միշտ կը մտածէք ձեր մասին, երբ մտահոգուելիք ոչինչ ունիք: Նայեցէք դժբախտ անձերուն եւ փառք տուէք Աստուծոյ: Մի՛ տրանջաք: ԱՌԻՒԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս) Չափաւորեցէք ձեր բոլոր հակումները, սիրալիր եղէք բարեկամներու եւ անծանօթներու հետ: Կեանքը ունի անսպասելի ըրակներ, որոնք ձեզ կրնան երջանկացնել: ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) Հարցերուն մտեցէք բարեմտութեամբ, այնպէս ինչպէս որ են: Մի՛ մոռնաք, որ կան ձեզի հետեւողներ, եւ դուք կրնաք օրինակելի տիպար մը դառնալ: ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր) Ինչ որ կ'ուզէք, որ իրելը ընէ ձեզի, նոյնը դուք ըրէք ուրիշին: Այս իմաստուն խօսքը կու գայ Սուրբ Գիւրգէն: Նաեւ կայ Ժողովուրդին առածը, որ կ'ըսէ՝ «Յարգէ, որ յարգուի»: ԿՍՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր) Եթէ ունիք պարտականութիւններ, զորս տակաւին չէք իրագործած, այսօր լաւ առեան է զանոնք իրագործելու: «Այսօրուան գործը վաղուան մի՛ ձգէք», կ'ըսէ իմաստունութիւնը: Վաղը ուրիշ գործեր կ'ունենաք ընելիք: ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) Կարեւորութիւն մի՛ տաք շատախօս եւ շողջորթ մարդոց, որոնք կը ջանան տպաւորութիւն ձգել ձեր վրայ: Անոնք ընդհանրապէս ծոյլ եւ դատարկագորտ կ'ըլլան: Ձանոնք շուտով հեռացուցէք ձեր քովէն: ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար) Դժուարութիւնները յաղթահարելու միակ եւ լաւագոյն միջոցը Աստուծոյ կամքին ապահովելն է: Վաղը նոր առեւ մը պիտի ծագի. չէք կրնաք ըմբռնել նախաբանականութեան հրաշալի որոշումները: ԾՈՒՎԱՆՈՑ (21 Յունուարին 19 Փետրուար) Կասկածամիտ մի՛ ըլլաք, ձեր սիրտը բացէք ձեր հարգատներուն եւ զիտեցէ, որ անոնք կը սիրեն ձեզ: Ձեր մտերիմներուն հետ հանդիպում մը ունեցէք՝ արուեստի գործեր տեսնելու համար: ԶՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ) Մարդոց հետ կարելի է դիւրութեամբ եւ բարեհաճութեամբ ապրիլ, երբ հասկնաք անոնց մտադրութիւնը կեանքի երեւոյթներուն նկատմամբ: Ձէք կրնաք պարտադրարք փոխել անձի մը ընաւորութիւնը: Դուք օրինակ եղէք համեստութեան, խոնարհութեան:

ՕՐԱՏԵՏՐ ՀԱՄԱՆՄԵՐՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ԱՄԱՆՈՐԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի թանգարանը, իր տարեկան աւանդութեան համաձայն, կադանդի տօնակատարութիւններուն կը մասնակցի՝ համապատասխան միջոցառումներով: Սրբապետը կը մատուցէ լիբանանեան աւանդական զարդարուցումներ եւ ձեռնարկներ, ինչպէս նաեւ կերպարուցումներ օրինակներ, որոնք իրեն ընդհանուր նիւթ ունին խաղողի, գինիի եւ որթատուկի զարդանախշեր: Ցուցադրութիւն վաճառքին զետեղուած են նաեւ կիրառական իրեր, ինչպէս՝ թիւշըրթներ, գաւաթներ, սպասներ, պայուսակներ, զարդեղէններ: Կան նաեւ Պէյրութտի ինժեներներէն ներշնչուած եւ անոնց ղեկավարած զեմալի զարդեր, բաժիններ եւ գործեր: Ցուցահանդէսը տեղ տրամադրած է նաեւ բարեմարտական գործունէութեան: Այսպէս՝ «Մէզոպոլիս»-ի հովանաւորած երեսներուն ձեռնարկներն աշխատանքներուն եւ Նոր Տարուան շնորհաւորական բացիկներուն կողքին տեղ գտած են նաեւ Ռուսիայի բանարկայներուն աշխատանքները: Ցուցահանդէսի ստեղծագործական բաժինը կը հարստացնէ լիբանանցի արուեստագէտներու կաւեզին, ապակեղէն, իսկապիւրջարէրէ պատրաստուած գործերը: Նշենք, որ այս ցուցահանդէսը կարելի է այցելել մինչեւ իրիկուան ժամը 9:30:

ՕՂԵՐԵՒՈՅՔ ՀԼԻԳՇԱՐԹԻ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003 ՊԵՅՐՈՒԹ ԱՆՁՐԵՒՈՏ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵՎ՝ 15°C ԳԻՇԵՐ՝ 11°C ՌՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 75%

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1953

ԿԱՄՈՎԵՆԱՆ ՍՈՒՐԸ Երկրպայի նկատմամբ Միացեալ Նահանգներու քաղաքականութեան փոփոխութիւնը դիւրանկանաւ սուրի մը մնամ կայսրու կը մնայ արեւմտեան երկրպայի ազգերուն վրայ: Ցարը, Ուաշինգթոնի կառավարութիւնը իր կողմէն իրաւունքները չէ ոչ որք, թէ Ուաշինգթոնը լրջօրէն կը մտածէ իր բաւականները երկրպայի քաշելու մասին, եթէ երկրպայի ազգերը ճիշտ փեն իրենց միութիւնը իրականացնելու համար: Արդարեւ, Ամերիկայի մէջ կը խորհին, թէ անօգուտ է ստուար թիւով բարեփոխումները: Բաժնուած եւ արեւմտեան կառավարութեան հետ ունեցած խորհրդակցութեանց ընթացքին ընդգծած էր այն պարագան, որ եթէ երկրպայի երկիրները չվաւերացնեն երկրպայի բանակի կազմութեան վերաբերեալ փոփոխութիւնները, Ամերիկայի կողմէն ըլլայ փոփոխութեան ընթացքը: Այսօր, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար ձոն Ֆոսթըրը Տալի, մամուլը ստուար փոփոխութիւնները խոր ազդեցուն (Հատուած)

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ

ՓԻՆԿ ՓՈՆԿ, ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱՐԻԱՆԱ ՍՈՍՈՒՆՃԵԱՆ - ՍԱՐԱԿԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑԱԲ ՄՐՑԱԶԱՐՔԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՍԱՐԶԻԿԸ

Հ. Մ. Բ. Մ. փինկ փունկի աղջկանց խումբին հետ Արարական ախոյեան խումբերու 15րդ ախոյեանության բաժակը բարձրացուցած Մարիանա Սոսունճեան - Սահակեան, երեկ արարական փինկ փունկի ֆետերասիոնին կողմնակցություն արձայնարքին լուսագուն մարկիկը, մրցաշարքին ընթացքին իր ունեցած օրինակելի եւ տիպար կեցուածքին համար:



Մարիանա Սոսունճեան-Սահակեան

Վ ս տ ա հ ա - բար, այս տիտղոս Հ. Մ. Բ. Մ. համար երկրորդ բաժակի մը համապարկը կը կա տ ո ի ի , որ ո վ հ ե տ ե ի միայն տիտղոսի տիրանալը չէ կարելորդ, այլ մարզական բարձր ոգի ունենալը եւ այլ մարզիկներու օրինակ դառնալը:

ՀԱՐՑԱԳՈՅՆ ԹՈՒՐՔ ԱՅՆԱՆՈՂ...

Երկրորդ, օրինական հարց մըն ալ գոյություն ունի: Այսօր միջազգային օրենքի համաձայն, թուրքերան հայապատկան հողեր գրաված չէ: Մէջտեղը միջազգային օրենքին համաձայն հողային հարց գոյություն չունի: Ինձի կը թուի, թէ անոնք, որոնք կողմնակից չեն հարցի լուծուելուն, քարոզչություն նպատակով օրակարգի վրայ կը բերեն հողային հարցը, իսկ թուրք կառավարություններն այլ ամենին աւելի այս կեցուածքը շահագործելով հայերու դէմ թշնամանք կը հարձակուին: Մինչդեռ հարցը սահմանները անիմաստ վիճակի բերելով ալ կարելի է լուծել եւ այս աւելի դիրքին է: Այս նիւթին վերաբերող շատ լաւ օրինակ մըն է Եւրոպական Միությունը: Ֆրանսիան եւ Գերմանիան հարկաւոր տարիներ սահմանը հոսկէ՞, թէ հոնկէ թող անցնի բստիով արիւն թափեցին, իսկ այդ սահմանները այսօր իմաստէ գուրկ են: Թուրքերու եւ հայերու միջեւ հարցը լուծելու գործըներ սահմանային հարց պէտք չէ ստեղծել:

Եզրպատական երկու խումբերուն՝ Ահլիի եւ Չամալէքի միջեւ: Ահլի 3-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով հանդիսացաւ ախոյեան՝ 11րդ անգամ ըլլալով: Երրորդ դիրքը գրաւեց Սալիմիէ (Քուէյթ):
Ստորեւ՝ 1989էն ի վեր ախոյեան, փոխ ախոյեան եւ երրորդ հանդիսացած խումբերը.
1989 (Սուրիա).- 1.- Ռաշիտ (Իրաք), 2.- Իթթի-հատ (Մէնուտական Արաբիա) 3.- Ահլի (Եզրպատ):
1990 (Սուրիա).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Չամալէք (Եզրպատ), 3.- Ժապիրա (Արաբական Միացեալ Էմիրություններ):
1991.- (Եզրպատ).- 1.- Չամալէք (Եզրպատ), 2.- Ահլի (Եզրպատ), 3.- Ահլի (Մէնուտական Արաբիա):
1992.- (Եզրպատ).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Ահլի (Մէնուտական Արաբիա), 3.- Խըթուր Թունուսիէ (Թունուս):
1993.- (Եզրպատ).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Չամալէք (Եզրպատ), 3.- Ժամիիէ Քառնապալիէ (Թունուս):
1994.- (Եզրպատ).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Ժամիիէ Քառնապալիէ (Թունուս), 3.- Չամալէք (Եզրպատ):
1995.- (Յորդանան).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Չամալէք (Եզրպատ), 3.- Ահլի (Մէնուտական Արաբիա):
1996.- (Լիբանան).- Ահլի (Եզրպատ), Չամալէք (Եզրպատ), 3.- Ահլի (Մէնուտական Արաբիա):
1997.- (Մարոք).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Չամալէք (Եզրպատ), 3.- Ժաիրա (Քուէյթ):
1998.- (Լիբանան).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Չամալէք (Եզրպատ), 3.- Ժաիրա (Քուէյթ):
1999.- (Եզրպատ).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Չամալէք (Եզրպատ), 3.- Արապի (Քաթար):
2000.- (Լիբանան).- 1.- Ռայան (Քաթար), 2.- Չամալէք (Եզրպատ), 3.- Ահլի (Մէնուտական Արաբիա):
2001.- (Լիբանան).- 1.- Չամալէք (Եզրպատ), 2.- Ռայան (Քաթար), 3.- Ահլի (Մէնուտական Արաբիա):
2002.- (Եզրպատ).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Ահլի (Քաթար), 3.- Քաթար (Մէնուտական Արաբիա):
2003.- (Լիբանան).- 1.- Ահլի (Եզրպատ), 2.- Չամալէք (Եզրպատ), 3.- Սալիմիէ (Քուէյթ):

Բան մը կայ այս սեւեռումին մէջ: Կը թուի, թէ եւ թուրքեր եւ հայերը յատկապէս կարելորդ չըլծանակներու մէջ, կը պահուուորին այս քաղաքականութեան ետին: Անոնք իրենք գիրենք կը մեկուսացնեն հեռու մնալու համար Յեղասպանութեան հարցին շուրջ ստեղծուած բանավէճի գործընթացէն: Երկու հաւաքականութիւնները զիրար կը դիտեն ուրաջումի այս քաղաքականութեան լոյսին տակ: Այստեղ հիմնական հարցումը հետեւեալն է՝ ի՞նչպէս կարելի է ձեռքագտնել այս խոչընդոտէն, յաւ դիտելով, որ թուրքերը ուրաջումի քաղաքականութիւնը պիտի չփոխուի մօտիկ եւ նախատեսելի ապագային: Հարցումն ապարզ է, կարելիութիւնը կա՞յ փոխ յարաբերութեան մը ստեղծումին, ի հեծուկ ուրաջումի քաղաքականութեան:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

ԾԱՆՐ ՊԱՏԻԺՆԵՐ

Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնը ծանր պատիժներ սահմանեց տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն իր մասնակցութիւնը չբերող Միլիարա ակումբին դէմ:
Նկատի ունենալով, որ ան 2003-2004 եղանակի ախոյեանութեան առաջին երեք մրցումներուն դաշտ չներկայացաւ, ֆետերասիոնին կողմէն ընդհանուր դասաւորման մէջ դասուեցաւ վերջին դիրքին վրայ (ուրբ-րորդ), ինչ որ բնականաբար կը նշանակէ անոր Բ. դասակարգ փոխադրուելը:
Բացի այդ մէկէն, ֆետերասիոնը Միլիարան տուգանքի ենթարկեց, անոր դէմ սահմանելով 150 միլիոն լիբանանեան ոսկիի տուգանք մը: Մինչեւ այն ժամանակ, որ անիկա այդ գումարը չի վճարեր ֆետերասիոնին, ան իրաւունք չունի որեւէ մրցաշարքի իր մասնակցութիւնը բերելու: Նիւթական այս պատիժը անոր դէմ կը սահմանուի, որովհետեւ 2003-2004 եղանակին իր տոմարներուն վրայ ստորագրած մարզիկներուն պարտքերը չէ վճարած:
Միլիարայի նման դաշտ ներկայացած չըլլալու պատճառով այլ ակումբներ ալ փոխադրուեցան վարի դասակարգեր: Սատաքա եւ Մէն Ժուպէ Բ. դասակարգէն փոխադրուեցան Գ. դասակարգ, իսկ Պըրմ Այն-թուրա եւ Շապապ Տարուն՝ Դ. դասակարգ, իսկ աղջկանց կայմներուն պարագային, Ա. դասակարգի խումբերէն՝ Սատաքա փոխադրուեցաւ Բ. դասակարգ, նկատի ունենալով, որ անոնք երեք մրցումի ընթացքին դաշտ չներկայացան:
Ֆետերասիոնը յայտնեց նաեւ, որ Ասիոյ պասքեթպոլի ֆետերասիոնին կողմէ տրուած որոշումը, որ 18 ամիսով կը կախակայէ Սաժէսի մարզիկներէն Էլի Մըշանթաքը, կը յարգէ եւ այդ մէկը կը գործադրէ, միեւնոյն ժամանակ ոչ մէկ ճիգ խնայելով, փաստելու, որ ան խթանիչ դերեր չէ գործածած: Ֆետերասիոնը ամէն գնով կ'ուզէ փաստել, որ Մըշանթաք նմանօրինակ արարք չէ կատարած:
Անդրադառնալով Պլու Սթարպ - Անդրանիկ մրցումին, ֆետերասիոնը ըսաւ, որ յետագային որեւէ հարց գոյութիւն չունի եւ անիկա տեղի պիտի ունենայ նախապէս ճշդուած թուականին՝ Շաբաթ, 3 Յունուար 2004, կէսօրէ ետք ժամը 5:00ին:

ՊՈՒՆՏԸՆԿԱ

ՎԵՐՏԸՐ ՊՐԵՄԸՆ՝ ԱՇՆԱՆ ԱՒՈՅԵԱՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պունտըսիկա) 17րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն, Վերտըր Պրեմըն իր դաշտին վրայ 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Հանս Թուրքը, հանդիսացաւ աշխարհի ախոյեանի խումբին մարտնչութեան 1-1 հաւասարութեամբ:
Համպուրկ 3-2 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք վերջին դիրքը գրաւող Այնթուրպա Ֆրանք-ֆորթի դաշտէն, երթի մրցումները արարեց 9րդ դիրքին վրայ, 16 կէտով ետ մնալով Վերտըր Պրեմընէն:
Ստորեւ՝ 17րդ եւ եր-

ՊԱՍՔԵԹՊՈԼ ԱՂԶԱՆՑ ԱՒՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱԺԷՍ - Հ.Մ.Բ.Մ.՝ 61-58

Լիբանանի պասքեթպոլի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան 3րդ հանգրուանի մրցումներուն, երեկ Հ.Մ.Բ.Մ.ի ներկայացուցչական խումբը կրէց եզրանակի իր առաջին պարտութիւնը՝ Սաժէս Մար Տուէթի դէմ, 61-58 արդիւնքով:
Գալիբի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, հակառակ անոր որ դաշտին տէրերը Ա. կիսախալին 30-26 արդիւնքով յառաջացան, սակայն մինչեւ մրցումին վերջին վայրկեանը անոնք ետ կը մնային: Նշենք, թէ ապիկա Սաժէսի երրորդ յաջողական յարթանակն էր:
●ՏՂՈՑ Բ. դասակարգի ախոյեանութեան 6րդ հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Բ.Մ.ի ներկայացուցչական խումբը երեկ երեկոյեան կարելորդ յաղթանակ մը արձանագրեց, երբ 78-69 արդիւնքով պարտութեան մատնեց Սանթարալը, այս վերջինին՝ Սալթրայի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին:
Նշենք, թէ ցարդ իր կատարած մրցումներուն ընթացքին, Հ.Մ.Բ.Մ. արձանագրեց հինգ յաղթանակ եւ կրէց միայն մէկ պարտութիւն:

Մի՛ մոռնար խնդրելու կաղանդ Պապայէն ՊՁՏԻԿ - ԼՁՏԻԿի գաւաթը, Նոր Տարուան լաւագոյն նուէրը



Գաւաթները կարելի է գտնել հետեւեալ գրախանութներուն մէջ.

- Բամապոպին, «Ճաղդոյեան» կեդրոն, Պուրճ Բամուտ
- Նարեկայի, Պուրճ Բամուտ
- Obellx, Անթիլիա

ԽԱԹԵՄԻ ԴԷՄ ՍԱՏՏԱՄԻ ՄԱՀԱՊԱՏԻԺԻՆ

Իրանի նախագահ Մոհամեդ Խաթեմի երեկ յայտարարեց, որ դեմ է մահապատիժի, նոյնիսկ եթե անհիկա պիտի յայտարարուի Իրաքի նախկին ղեկավար Սատտամ Հիւսեյնի դեմ: Խաթեմի դիտել տուաւ, որ թերեւս Սատտամ արժանի է մահապատիժի, սակայն եթե ձեռք կայ, որ այլ պատիժի մը ենթարկուի, աւելի լաւ կ'ըլլայ:

Առաջին անգամ ըլլալով Խաթեմի կ'արտայայտուի մահապատիժի մասին երկիրի մը մէջ, ուր այդպիսի վճիռներ կ'արձակուին ատենաներու կողմէ եւ գործադրութեան կը դրուին: «Էմնըսթի Ինթըրնէշնըլ»-ի տեղեկագիրին համաձայն, 2003ին, 113 հոգի մահապատիժի ենթարկուած է Իրանի մէջ:

(ԱՖՓ)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ԳՆԱՀԱՏԱՆՔԸ ԿԸ ՅԱՅՏՆԷ...

Շարունակուած Ա. ԷջԸԳ

«Որպէս հոգեւոր պետը կ'իլիկիոյ Հայոց՝ Հայկական Յեղասպանութեան ուղղակի գոհերուն է որպէս կաթողիկոս Մեծի Տանն կ'իլիկիոյ, Հայկական Յեղասպանութեան ճանաչումը կը նկատեմ մեր եկեղեցւոյ համար կենսական առաջնահերթութիւն մը՝ ի խնդիր մարդկային իրաւանց, բռնութեան եւ Յեղասպանութեան առաջըր առնելու եւ արդարութիւն ու խաղաղութիւն հաստատելու, մեր եկեղեցւոյ տարած աշխատանքներու ծիրէն ներս:

«Կը յուսամ, որ եկեղեցիներուն կողմէ կատարուած այս աշխատանքը, ինչպէս նաեւ Չուիցերիոյ խորհրդարանին կողմէ առնուած այս որոշումը, երկխօսութեան պայմաններ պիտի ստեղծէ, երկխօսութիւն մը, որ հիմնուած պէտք է ըլլայ Հայկական Յեղասպանութեան ճանաչման վրայ:

«Իրապատու կապեր գոյութիւն ունին գոյիցերիացի եւ հայ ժողովուրդներուն միջեւ, որոնք արմատացած են մեր երկու ժողովուրդներուն եւ եկեղեցիներուն պատմութեան մէջ: Այս յարաբերութիւնները աւելի խորացան, երբ 1896ին Չուիցերիոյ մէջ հայաստանեան միութիւն մը հիմնուեցաւ: Հայ ժողովուրդը մեծապէս երախտապարտ է Չուիցերիոյ եկեղեցիներուն եւ ժողովուրդին կողմէ իրեն կատարուած մարդասիրական ու բարոյական օգնութեան, Հայկական Յեղասպանութեան օրերուն եւ Յեղասպանութենէն յետոյ:

«Մենք ձեզի կը յայտենք մեր ջերմ շնորհակալութիւնները մեր տարած ճիգերուն համար, որոնք մղեցին Չուիցերիոյ խորհրդարանը Հայկական Յեղասպանութեան ճանաչման քաջ որոշումը տալու:

Վեհափառ հայրապետը մօտաւորապէս նոյն բովանդակութեամբ նամակ մը յղեց նաեւ Չուիցերիոյ խորհրդարանի նախագահին:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռչքա Ֆիշըր, որ միջին արեւելեան շրջապոյտի մը ձեռնարկած էր, երեկ Այսրյորդանանի մէջ տեսակցութիւն ունեցաւ պաղեստինցի վարչապետ Սիմէտ Բորէյի հետ, որ գերմանացի պաշտօնատարին վեկուցեց խաղաղութեան ճամբու քարտէսը գործադրութեան դնելու ճիգերուն մասին: Հանդիպումին ընթացքին, Բորէյ զրուատած է Գերմանիոյ շինիչ դերակատարութիւնը խաղաղութեան գործընթացին մէջ:

Հանդիպումին աւարտին, Ֆիշըր կոչ ուղղեց Բորէյի եւ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի վերսկսելու խաղաղութեան բանակցութիւններուն: Ֆիշըր, որ աւելի ուշ տեսակցութիւն պիտի ունենար Շարոնի հետ, հանդիպում չունեցաւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի հետ:

Յետմիջօրէին, Ֆիշըր մասնակցեցաւ ապահովութեան խորհրդածոյղովի մը՝ Իսրայէլի Հերցլիա քաղաքին մէջ: Իր խօսքին մէջ, գերմանացի պաշտօնատարը կոչ ուղղեց խաղաղութեան ճամբու քարտէսի գործադրութեան՝ զգուշացնելով Իսրայէլը սխալ ընտրութիւններէ: Ֆիշըր հարց տուաւ, որ բացի խաղաղ գոյակցութենէն պաղեստինցիներուն հետ, Իսրայէլի ի՞նչ այլ ընտրանք կրնայ ունենալ: Ֆիշըր քննադատեց նաեւ Այսրյորդանանի շուրջ կառուցուող ապահովութեան պատը, որ արդարացուցիչ որեւէ պատճառ չունի:

● ԻՍՐԱՅԷԼԻ նախագահ Մոշէ Քացաւ յայտարարեց, որ տակաւին յատուտ է Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին հանդէպ: Քացաւ կը խօսէր Չինաստանի մէջ, ուր հանդիպումներ պիտի ունենայ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ:

● ԻՍՐԱՅԷԼԻ կառավարութիւնը 160 միլիոն տոլար յաւելեալ յատկացում կատարած է Այսրյորդանանի ապահովութեան պատին կառուցման համար, յայտնեց ելեւնուտքի նախարար Պենիամին Նեթանիահու:

(ԱՖՓ)

ՍԱՏՏԱՄԻ ՇԵՏԵՒՈՐԴՆԵՐԸ ԱԿԱՆՈՒԹՄԸ...

Շարունակուած Ա. ԷջԸԳ

ՍԱՏՏԱՄ ԱՐԺԱՆԻ Է ԳԵՐԱԳՈՅՆ ՊԱՏԻՃԻՆ, ԿՐՍԷ ՊՈՒՇ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ յայտարարեց, որ Սատտամ Հիւսեյն պէտք է դատապարտուի ամէնէն ծանր պատիժին: Պուշի կառավարութիւնը արդէն իսկ հասկցուցած էր, թէ դեմ պիտի չկենայ մահապատիժի վճիռին, եթէ անհիկա յայտարարուի դատապարտութեան աւարտին:

Մահապատիժի պարագան սակայն կրնայ ինք մտադիր չէ տենոր բաժանումներ պատճառել ՄԱԿի եւ Ուաշինկթընի կարգ մը դաշնակիցներուն հետ, որոնք ջնջած են մահապատիժը: Պուշ անտեսելով այս բոլորը, դիտել

տուաւ, որ Սատտամ արժանի է ամէնէն ծանր պատիժին՝ իր ժողովուրդին դէմ գործած ոճիրներուն համար:

Պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտ իր կարգին յայտնեց, որ Սատտամի հարցաքննութեան պարտականութիւնը փոխանցուած է Մի. Այ. Էյ. ին: Ըստ Ռամսֆելտի, գործակալութեան տնօրէն Ճորձ Թենթը անձամբ պիտի առաջ

նորդէ Սատտամի հարցաքննութիւնը:

Սպիտակ Տան պետը յայտնեց նաեւ, որ ինք մտադիր չէ տեսակցութիւն մը ունենալու Սատտամի հետ: Ան աւելցուց, որ հաւատարմութեան քանոնի վէջեր ունեցած ըլլալը կամ չըլլալը մեծ տարբերութիւն չունին, որովհետեւ Սատտամ եթէ նոյնիսկ չէ ունեցած վէջերը, բայցեայնպէս աշխատանք տարած է ունենալու համար: Յիշեցրնենք, որ Պուշ Իրաքի պատերապմին հիմնական պատճառը նկատած էր ենթադրաբար գոյութիւն ունեցող հաւաքական վէջերը:

● ԻՏԱԼԻՈՅ պաշտպանութեան նախարար Անթոնիօ Մարթինօ զգուշացուց, որ Սատտամի ձերբակալութեան կրնան յաջորդել շատ աւելի լայն տարողութեամբ ահաբեկչական գործողութիւններ:

● ՍՍՏՏԱՄԻ ամէնէն մեծ աղջիկը՝ Ռադա, որ Յորդանան կը գտնուի իր մէկ այլ քրոջ եւ պաւակներուն հետ, փախաք յայտ

նած է տեսնելու հայրը, գիտնալով հանդերձ, որ ամերիկացիները շատ հաւանաբար պիտի չարտօնեն այդ հանդիպումը:

● ԱՒՍՏՐԻԱՅԻ ծայրայեղական աջակողմեան ղեկավար Եորկ Հայտէր յայտնեց, որ ամերիկեան ուժերը կրնան ձերբակալած ըլլալ Սատտամի «կրկօրինակներէն» մէկը: Ան աւելցուց, որ լորձուքի Տի. Էն. Էյ. ի քննութիւնը բաւարար

չէ հաստատելու, որ ան Սատտամն է, եթէ ամերիկացիները չունենին Սատտամի Տի. Էն. Էյ. ի նախապէս կատարուած քննութիւններ ու անոնց արդիւնքները:

● ՀԱՐԱՅԻՍԻ ԲՈՐԸՄ Էրէկ հաստատեց, որ ընդառաջելով Միացեալ Նահանգներու պահանջին, 3 հազար պիստոլ պիտի ուղարկէ Իրաք:

(ԱՖՓ)

ՏԵՆԲԹԱՇ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԼԱՅՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ՆԻԿՈՍԻԱ, 17 (ԱՖՓ).- Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ կոչ ուղղեց կառավարական լայն ընկերակցութեան մը կազմութեան կիպրոսի թրքական բաժնիին մէջ, նկատի ունենալով, որ կիպրակի օրուան ընտրութիւններուն արդիւնքները մեծամասնութիւն չեն տուած կուսակցութիւններէն ոչ մէկուն:

Կիպրակի օրուան քուէարկութեան արդիւնքները 25ական աթոռ տուին ընդդիմադիր կուսակցութիւններուն եւ Տենքթաշի դաշնակիցներուն: Այս արդիւնքին պատճառով որեւէ կուսակցութեան համար անկարելի պիտի դառնայ սակցութեան համար անկարելի պիտի դառնայ Միութեան անդամակցութեան, որ պաշտօնական կը դառնայ Մայիսին: Մինչ այդ, կիպրոսի տագնապը պէտք է լուծուած ըլլայ, կամ գէթ այդ ճամբուն վրայ դրուի:

Տենքթաշ հանդիպում ունեցաւ չորս կուսակցութիւններու ղեկավարներուն հետ՝ կոչ ուղղելով անոնց, որ համաձայնի կառավարական ընկերակցութեան մը կազմութեան մասին:

ՇԻՐԱՔ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԼԱԶԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԱՐԳԻԼՈՂ ՕՐԷՆՔԻ ՄԸ ԾՐԱԳԻՐԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Ճրանսայի նախագահ Ժաք Շիրաք երէկ Էլիզբէթի պալատին մէջ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին ջերմօրէն պաշտպանեց պետական դպրոցներուն մէջ իսլամական լաչակի գործածութիւնը արգիլող օրէնքի մը ծրագիրին մշակումը:

Երկարատեւէն ի վեր այս հարցը կը ստեղծէ քաղաքական խնդիրներ: Առ այդ, օրէնքի մը ծրագիրին մշակումը ընթացքի մէջ է եւ յայտնապէս ան պիտի որդեգրուի եւ միանգամընդմիջ պիտի արգիլուի դպրոցներէն ներս իսլամական լաչակի գործածութիւնը: Շիրաք ըսաւ, թէ ինք այս ձեռով կը պաշտպանէ երկրին լայն շրջանը: «Մթալի» կոչուող օրէնքը կրնայ մօտ օրէն վաւերացուիլ, հակառակ մեծաքի իսլամներու բողոքին եւ դժգոհութեան:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՂՁՈՒՆԷ ...

Շարունակուած Ա. ԷջԸԳ

պով հետապնդեցին Հայկական Յեղասպանութեան ճանաչման աշխատանքները: Գոհունակութեամբ կ'ողջունենք տարիներու հետեւողական ջանքերը, որոնք ի գործ դրուեցան Չուիցերիոյ հայ համայնքի, յատկապէս «Չուիցերիա - Հայաստան» ընկերակցութեան մեր գործակիցներուն կողմէ:

Հիտա Չուպոյեան դիտել տուաւ, որ յառաջադէմ երկիրները Հայկական Յեղասպանութիւնը ճանաչած են իմանականօրէն այն պատճառով, որ թուրքիոյ կառավարութիւնը հետեւողականօրէն կը շարունակէ ուրանալ այդ ոճիրը եւ կը մերժէ ստանձնել իր պատասխանատուութիւնը:

Միւս կողմէ, Չուիցերիոյ մէջ Հայաստանի դեսպան Չոհրապ Մնացականեան յայտարարեց. «Չուիցերիոյ խորհրդարանը անգամ մը եւս հաստատեց, թէ հաւատարիմ է մարդկային արժեքներուն եւ արդարութեան»:

«Չուիցերիա - Հայաստան» ընկերակցութեան համանախագահ Սարգիս Շահինեան իր կարգին դիտել տուաւ, որ որոշումը կարեւոր է ամբողջ հայութեան համար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՔԱՇԿԵՐՈՅԹ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ**

Երկուշաբթի, 5 Յունուար 2004ի,
երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ,
BIEL PAVILLON ROYAL
տրահին մէջ:

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ
Երեքշաբթի, 6 Յունուար 2004,
երեկոյեան ժամը 7:30ին
UNESCO տրահին մէջ:

ՏՈՍՏԵՐԸ ԿԸ ՎԱՏԱՌՈՒՆ
Obelix գրախանութ, Ալեքիլաս - Promenade Ջալթա
Համազգայինի «Լեւոն Շանթ» կեդրոն
Համազգայինի գրախանութ
Տիպոգրֆեք Geka - Սթիւսիօ Վաչէ, Հաճըն:

**Գրատուն ՈՍԿԵՂԱՐ
VOSKETAR Bookstore**

★ Մանկական ԱԲԳ եւ հեքիաքներ:

★ Հռչակաւոր բառարաններ
Oxford, Longman, Larousse:

★ Երագներու բանալի մոր լոյս տեսած Երագահան, հոգեբանական եւ հոգեվերլուծական տրեւալներով:

Պուրճ Համուտ, Ս. Փրկիչ եկեղեցւոյ կից, Հեռ.: 01/264750
E-mail: vosketar@yahoo.com

**TOGETHER WE ARE STRONGER
ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ**

ԱՖԻԼ AFHIL
Armenian Mutual Fund
Tel. / Fax: 01 242556 - 242557